Ղարաբաղեան Շարժման կեղծ ժամանակագրութիւնը

ԳԵՒՈՐԳ ԽՈՒԴԻՆԵԱՆ

Ներկայումս Արցախի օգտին մեր քարոզչութիւնը տարւում է ոչ թէ պետական մակարդակով, այլ առանձին անհատների ու կուսակցութիւնների ջանքերի շնորհիւ: Անշուշտ, դա վերջին տարիներին մեր թանկագին ժամանակը միտինգներում սպառած «համազգային շարժման» հեռատես քաղաքականութեան արդիւնքն է, որը Ղարաբաղի դարաւոր գոյամարտը շեղեց իր ազգային ակունքներից եւ Հայաստանն ու Արցախը դարձրեց ԽՍՀՄ դեմոկրատական շարժման փորձադաշտը: Այդ քաղաքականութեան ամենադառը պտուղները հայութիւնը ստիպուած էր ճաշակել 1991ի Ապրիլ-Յունիսին: Դարերով մեր հոգեբանութեան մէջ նստած է նոր գաղափարի համար առաջինը նահատակուելու պատրաստակամութիւնը, եւ այդ պատճառով մինչեւ վերջ չենք ըմբռնում Ապրիլ-Յունիսեան մղձաւանջի բոլոր պատճառները՝ երբ իր հոգեվարքն ապրող խորհրդային կայսրութեան զօրքերը իրար հետեւից դատարկում էին Արցախի հայկական գիւղերը, իսկ մեր հանրապետութեան ղեկավարութիւնը յոխորտալից, բայց անուժ կեցուածքով աւելի էր գրգռում վիրաւոր գազանին եւ դատարկ դիմումներ ուղղում աշխարհի բոլոր մեծերին: Անցաւ եւ այդ փուլը: Ամբողջատիրութեան հրէշը, թուում է, թէ սատկեց, թողնելով Արցախում 24ից աւելի աւերուած հայկական գիւղեր: Ադրբեջանի ղեկավարութիւնը հաշուենկատ քայլերով՝ Մոսկուային իր հաւատարմութիւնը յայտնելով եւ Հայաստանը ղեկավարող քաղաքական դիլետանտների սխալներից օգտուելով կարողացաւ պոկել իր բաժինը, իսկ Օգոստոսեան դէպքերից յետոյ այժմ արդէն դեմոկրատական ըզգեստներ հագնելու տենդագին փորձեր է անում: Անշուշտ, Ադրբեջանը մեր ղեկավարութեանը քաղաքական ճկունութեան լաւ դասեր տուեց եւ ապացուցեց, որ Մութալիբովի «կոմունիստական» կոչուող վարչակարգը իր էութեամբ աւելի ազգային է, քան ղարաբաղցիների «յաւելեալ արեանգնով յաւելեալ աթոռներ զբաղեցրած «համազգային շարժում»-ը:

Դրա վառ վկայութիւնն է ԼՂԻՄի տխրայռչակ կազմկոմիտէի կողմից 1990 թուականին հրատարակուած «ԼՂԻՄի ժամանակագրութիւնը. Փետրուար 1988-Փետրուար 1990» գրքոյկը: Անմիջապէս կարելի է նկատել նրա հեղինակների չքողարկուած ձգտումը՝ իրենց տեսակէտները յարմարեցնել պետական քաղաքականութեան սկզբունքներին, Մոսկուայի՝ Արցախի հարցում գրաւած դիրքորոշման ելակէտային դրութիւններին եւ դրանց միջոցով հարուած հասցնել Արցախի օգտին տարուող քարոզչութեանը: Այս նպատակով նրանք փորձում են իրենց ներկայացնել որպէս գոյութիւն ունեցող կարգերի ջերմ կողմնակիցներ, իսկ հայերին՝ անհաշտ հակառակորդներ:

Ժամանակագրութիւնը սկսում է պատմական մի տեղեկանքով, ուր բերւում են Արցախի պատմութեանը վերաբերուող մի քանի կցկտուր փաստեր: Ղարաբաղեան խնդրի քննարկումը Կավբիւրոյի կողմից 1921 թուականին հեղինակների կարծիքով «...ունեցել է իսկապէս դեմոկրատական բնոյթ: Հարցի լուծումը չի հանդիսացել ինչ-որ սուբիեկտիւ տեսակէտների կամ էլ կողքից կատարուած ճնշման հետեւանք»: Ադրբեջանը հասկանալի պատճառներով փորձում է ապացուցել Կավբիւրոյի կամայական որոշման օրինականութիւնը: Սակայն ներկայումս, երբ կոմկուսը հեռացուած է իշխանութիւնից, Հայաստանի կառավարութիւնը իրաւական բոլոր հիմքերն ունի չճանաչելու ոչ-սահմանադրական այս ակտը եւ պահանջելու Արցախի կարգավիճակի փոփոխումը:

Կեղծագրի հեղինակները մի քանի կցկտուր փաստերի միջոցով փորձում են ապացուցել, թէ իբր ԼՂԻՄը խորհրդային կարգերի օրօք հասել է զարգացման աւելի բարձր մակարդակի, քան Ադրբեջանի կամ Հայաստանի որեւէ այլ շրջան, իսկ մարզում եղած թերութիւնները սոսկ վարչա-հրամայական համակարգի հետեւանքն են: Այստեղից բխում է նրանց հիմնական թեզը՝ Ղարաբաղեան շարժումը օրինաչափ ու անխուսափելի երեւոյթ չէ, այլ ներմուծուել է դրսից՝ հայ ազգայնականների կողմից, որոնք առաջինը ձեռք բարձրացրին ադրբեջանական ժողովրդի դէմ, եւ առաջին զոհերն էլ եղան Ստեփանակերտ-Աղդամ ճանապարհին սպանուած երկու ադրբեջանցիները: Պատճառա-հետեւանքային այսպիսի կապը անտեղեակ ընթերցողի աչքում փոխում է զոհի ու մարդասպանի տեղերը եւ արդարացնում հայ բնակչութեան նկատմամբ իրականացուած բռնութիւնները: Հետագայ շարադրանքի ընթերցումը ցոյց է տալիս, որ գրքոյկի հեղինակները իրենց ձեռքի տակ եղած փաստերը վերցրել են պետանվտանգութեան կոմիտէի հաշուետուութիւններից: Շարադրանքի բնոյթն անգամ յիշեցնում է այդ կազմակերպութեան ծանօթ ձեռագիրը՝ իրար են յաջորդում 1988-1989ի դէպքերի վերաբերեալ լրտեսական բնոյթի տեղեկութիւնները: Կարդալով աւելի քան երկու տարուայ հերոսական եւ անհաւասար պայքարի այս ժամանակագրութիւնը, օրինաչափօրէն կարելի է հարց տալ ադրբեջանական կողմին. իսկ ինչո՞ւ համար էին Ղարաբաղի հայերը այդպիսի ինքնազոհութիւնների գնում՝ ամիսներով գործադուլներ անում, երթեր ու ցոյցեր կազմակերպում, պաշտպանում իրենց օջախները, անվախ կերպով դուրս գալիս մինչեւ ատամները զինուած բանակի դէմ: Ադրբեջանական կեղծարարները դա բացատրում են սոսկ սեպարատիստների, նացիոնալիստների, կարիերիստների եւ լարուածութեան պայմաններում իրենց «ամբիցիոզ» պլաններն իրականացնող արկածախնդիրների գործողութիւններով: Սակայն այդ գործողութիւններն այնքան բազմաթիւ ու զանգուածային են, որ ստացւում է, թէ Արցախի ողջ հայ բնակչութիւնը բաղկացած է նման մարդկանցից: Այդ պատճառով էլ անկողմնակալ ընթերցողը ծանօթանալով բրոշիւրին կամ կենկնի խոր տարակուսանքի մէջ (եթէ նա անտեղեակ անձնատրութիւն է) կամ էլ արագօրէն կը հասկանայ այս կեղծագրի միտումնաւոր բնոյթը: Անշուշտ, կազմկոմիտէի հրատարակած գրքոյկը արդէն հնացած է եւ ներկայումս չի համապատասխանում դիմակափոխութեան հանդէսով տարուած Ադրբեջանի ղեկավարութեան նոր պլաններին: Բայց ինչ էլ որ լինի, չնայած նրան, որ փոխւում են Ադրբեջանի քաղաքականութեան առանձին կողմերը, սակայն անփոփոխ է մնում վերջնական նպատակը՝ Արցախի հայաթափումը: Եւ համոզուած ենք, որ այդ նպատակի իրականացման համար պայքարի էստաֆետը կոմունիստական Ադրբեջանից իր ձեռքը կը վերցնի «դեմոկրատական» Ադրբեջանը, որի յաղթանակի հետ շարունակում են յոյսեր կապել համազգային աթոռասիրական շարժման մեր այնքան դեմոկրատ առաջնորդները: